ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Հովհաննես Թումանյանի քնարերգության ուսումնասիրությունը՝ նրա երկերում գեղարվեստական-տարածական աշխարհի դիտարկմամբ

Հետազոտող ուսուցիչ՝ Վեներա Ստեփանյան

Երևանի Հակոբ Պարոնյանի անվան թիվ 59 դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՎԻՇՏԸ 6

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մերօրյա քաղաքական ու սոցիալական բազմաբարդ համադրումների ու հակադրումների թնջուկը մի յուրատեսակ գորդյան հանգույց է դարձել։ Հայն ու իր ճակատագիրը դարձյալ բախման մեջ են։ Եվ այստեղ է , որ Ամենայն հայոց մեծ բանաստեղծի մեծ հումանիզմի, խոր փիլիսոփայության կարիքը կա՝ ազգին թմբիրից արթնացնելու։ Հետազոտական այս աշխատանքը նպատակ է հետապնդում Թումանյանի՝ տիեզերական մտածողությամբ հագեցած գանձերից մեջբերումներով, բազմախորհուրդ քնարերգության ու նրա զարդը հանդիսացող իմաստուն քառյակների միջոցով վերաիմաստավորել մարդ-բնություն կապը որպես կենսական անհրաժեշտություն։

Թումանյանի պոեզիան հենց հին ու նոր Հայաստանն է,
որը հարություն է առել ու մխրճվել նրա բանաստեղծություններում։
Թումանյանը էպոս է, ազգային դյուցազներգություն։
Վալերի Բրյուսով

Հայ գրականությունը իր գոյության ընթացքում ունեցել է շատ բանաստեղծներ. նրանցից յուրաքանչյուրը երգել է իր սերը, հայրենիքի սերը. իր վիշտը, ժողովրդի վիշտը այս-այն դեպքի առթիվ. երգել է երբեմն շատ նուրբ արվեստով ու զգացումներով, սակայն համարձակ կարելի է ասել, որ ոչ մի բանաստեղծ կյանքի ներկային ու անցյալին կապված չի եղել այնպես, ինչպես Թումանյանը, նաև ոչ մեկի արվեստը այնքան պարզ ու հարազատ ժողովրդական չէ, որքան Թումանյանինը։

Հասարակ գյուղացուց սկսած մինչև նրբաճաշակ մտավորականը հավասարապես հասկանում են Թումանյանին և զմայլվում նրանով։ Սա մի բացառիկ երևույթ է, որ ցույց է տալիս բանաստեղծի մեծությունը. մի երևույթ, որ ցույց է տալիս, թե բանաստեղծն իր ժողովրդի մսից ու արյունից է։

Թումանյանը ստեղծագործել է գրական շատ ժանրերով։ Չի գրել միայն վեպեր և դրամատիկական գործեր, թեպետ ունեցել է մշտական ձգտում և այդ ուղղությամբ փորձեր է կատարել։

Ամեն մի գրող ամենից առաջ գնահատվում է իր լավագույն ստեղծագործություններով։ Այս առումով անվիճելի փաստ է, որ Թումանյանը մեծ ժողովրդականության է հասել, դարձել իր ժողովրդի ամենաանվանի ու ամենաճանաչված բանաստեղծը՝ ամենից առաջ շնորհիվ իր քնարերգության՝ լինեն դրանք քառյակներ, բանաստեղծություններ, քնարաէպիկական թե էպիկական պոեմներ, լեգենդներ ու բալլադներ։

Թումանյանի՝ որպես բանաստեղծի ձևավորման համար խոշորագույն ազդակ է հանդիսացել Լոռու հեքիաթային ու վիպական բնությունը։ Հայրենի բնությունը նրա համար եղել է մի վիթխարի դպրոց բաց երկնքի տակ։ Նա ընթերցել է բնության գիրքը (ըստ Վալտեր Սկոտի՝ «մեծագույնը գրքերից») դասագրքից առաջ։ Իր մանկության տպավորությունների առանցք դարձնելով բնությունը՝ Թումանյանը կարևոր նշանակություն է տվել բնության առաջին ընկալումներին իր հոգեկան աշխարհի ձևավորման ու հարստացման գործում։ Այս առումով նա ասել է, թե «բնությունից հեռացողը դժբախտանում է»։

Պատահական չէ, որ Թումանյանի մի քանի լեգենդներում հալածվածներն ու դժբախտները ապավեն են գտնում բնության մեջ, թռչուն դառնալով՝ խորթ մորից հալածված որբերը («Պողոս-Պետրոս»), աշխարհակալ Լենկթեմուրի հայ գերիները («Աղավնու վանքը»), և կամ անմուրազ մեռած աղջկա մոխրացած սիրտը փոխարկվում է խաշխաշի ծաղկի, որպեսզի սիրած տղան նրանով արբի «էս կոշտ ու կոպիտ կյանքից հեռացած»՝ ապրի երազներում («Աղջկա սիրտը»)։

Անհարազատ իրականության մեջ ծանր պահեր ապրելու պահին բուռն կարոտով ձգտել է դեպի հայրենի եզերքի բնությունը, մանկության վայրերը՝ իր հին ծանոթների մոտ սփոփանք գտնելու։

Լեռնե՛ր, ներշընչված դարձյալ ձեզանով,
Թընդում է հոգիս աշխուժով լըցված,
Ու ջերմ ըղձերս, բախտից հալածված,
Ձեզ մոտ են թըռչում հախուռն երամով։

Հայրենի լեռնաշխարհի բնապատկերներով է ոգեշնչված բնությունը, տիեզերքն ընդգրկելու, բնության, տիեզերքի հետ ձուլվելու, նույնանալու Թումանյանի ձգտումը, ինչպես և նրա տենչը՝ դեպի Անհունը, դեպի Վեր, դեպի Բարձրը, որ խորհրդանշում են բանաստեղծի հասարակական և գեղագիտական իդեալը։

Թումանյանի երկերում իշխում են պարզությունն ու լակոնիզմը, և դրանից է, որ կարդալիս ծանրություն չենք զգում, որովհետև նրա յուրաքանչյուր բառը գործառույթ ունի և չի ծանրաբեռնում երկը։ Նա երբեք չի ցուցադրում իր լեզուն, գեղեցիկ բառերի իր իմացությունը, քանի որ հասու է, թե բառը գեղեցիկ է իր տեղում, իսկ եթե նա գործառույթ չունի՝ ավելորդ է։

Եթե կամենանք Թումանյանի չափածոն վեր ածել արձակի, դա բնական կստացվի, քանի որ անկաշկանդ ու ինքնաբուխ է գրված։

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՎԻՇՏԸ

Թումանյանական խոսքն ու իմաստնությունը ավելի քան արդիական են։ Ժողովրդական բառ ու բանը, խորհուրդն ու խրատը կարմիր թելի նման անցնում են ընթերցողի կյանքի ողջ ընթացքում։ Պարզ, բայց ոչ պարզունակ լեզվով գրած երկերը անմիջապես պարուրում են ընթերցողին, տեղափոխում նրան ժամանակի և տարածության մեջ, կամ էլ նախնյաց խորհրդով փորձում ուղղորդել նրան։

Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին։

Մերթ զայրացկոտ ծառս է լինում
Մինչև երկինք կապուտակ,
Ու մերջ հոգնած սուզվում, իջնում
Դեպի խորքերն անհատակ։

Հայոց վիշտը թվում է անտակ ու խոր, անմխիթար ու անամոք, և բանաստեղծին այլ բան չի մնում, քան իր «հայրենի օրենքովը հին՝ վերջին հանգիստը կարդալ իր ազգի անբախտ զոհերին»։

Թերևս ավելի քան երբևէ, խիստ արդիական է հնչում նրա «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը։ Ազգային ժողովրդական պատկերը չի սահմանափակվում ժամանակի մեջ։ Այս բանաստեղծությունը մի սրտախոր սուգ է՝ իր պարզության մեջ վսեմ։ Վշտի սարսուռով ,ասես, բարձր ու խորունկ հոգին, կանգնած հայոց լեռների հանգույցում, անհուն ցավով հոգեհանգիստ է կարդում այն անմեղ զոհերին, որ ընկան, մեռան հայոց աշխարհում և ցրվեցին հազար հազարով…

…Հանգե՛ք, իմ որբեր… իզու՛ր են հուզմունք, իզու՛ր և անշահ…
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկա՛ր էսպես կը մնա…

«Հոգեհանգիստ»

Ազգային աղետները անփարատ տրտմությամբ էին պարուրում բանաստեղծի հոգին՝ նրան տանելով դեպի վշտի ու անէացման ոլորտներ։

Թումանյանն իր ապրած իրականության ականատեսն էր, մասնակիցը։ Տարիների հեռվից բանաստեղծի վաղաժամ ճերմակած կերպարանքն ուրվագծվում է անիրավված ժողովրդի հոգսերի ու անկատար մնացած բանաստեղծական հղացումների հետ. մի ձեռքով գրում էր, մյուսով՝ փրկում։

Նա ուզում էր տիրություն անել իր ժողովրդին, կանխել վերահաս աղետը, որ թվում էր՝ վերջինն է, բայց բնավ վերջինը չէր։ Հայ ժողովուրդը բախտն ու ճակատագիրը դրել էր փրկության զոհասեղանին ու հայացքը հառել դեպ էն Վեհը, էն Բարձրը։

Վեր է կացել հին վիշապը նոր թափով,
Վեր է կացել վերջին մոլի տագնապով.
Արյունռուշտ ոճիրներով ահավոր
Մահ է շնչում լեռներն ի վեր ալևոր։
«Վերջին տագնապը»

Բանաստեղծը միշտ հայրենիքի հետ է. ժողովրդի վիշտը սրտում ապրում է նրա անցյալով, ներկայով, և ժողովրդի նման, շարունակ երազում հույսի մի հայրենիք…

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն , խորհրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սրրտի խորքից խոսք ես խոսում աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ.
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին-
Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք։

«Հայրենիքիս հետ»

Հայ ժողովրդի պատմության ողջ ընթացքն ու դրամատիկականությունը, աղետավոր չարիքներին դիմադրելու անընկճելի ոգին, լավ կյանքի հասնելու կարոտն ու ձգտումը խտացված է Թումանյանի «Հայոց լեռներում» բանաստեղծության մեջ։ Իմաստալից պոետիկ արվեստի, պատմական կուռ կառուցվածքի ու բովանդակության ընթացքի միասնության մի յուրօրինակ խառնուրդ է ընկած նրա բարձր գեղարվեստականության հիմքում։

Լեռները հայ ժողովրդի առաջին կացարանն են, օրրանը, տառապանքի ու ձեռքբերումների վկան։ Մեկ այլ հասկացությամբ՝ հայոց լեռները հենց հայ ժողովրդի ճակատագրի արտացոլումն են՝ խրոխտ, խռովված, խութերով ու դժվարություններով, բայց աննկուն ու վեհ, դեպի Բարձրը ձգտող, կապույտի մեջ միախառնվող, բայց և տառապանքի ամպածրար փշեպսակն իրենց գագաթներին առած։

Թումանյանն իր ժողովրդի ճակատագրի տաղերգուն է։ Նրա արվեստի արդիականությունը բխում է հենց այս գաղափարից։ Փոխվում են ժամանակները, բայց չի փոխվում հայ ժողովուրդը, չի փոխվում նրա ճակատագիրը։ Պարբերական խաղաղությունն ու կայունությունը երաշխիք չեն ժողովրդի համար, չնայած որ վերջինս առիթը բաց չի թողնում ողջ աշխարհին իր ապրելու մեծ ներուժը ցույց տալու։

Բանաստեղծի դավանանքը առավել հստակ արտացոլված է նրա «Հսկան»բանաստեղծության մեջ.

…Ասենք մեծ ես,
Մի՞թե պետք է փոքրի՛ն տանջես։
Մեծ թե փոքրը, ինչ էլ լինի,
Ամեն ապրող շունչ կենդանի,
Որ ծնվել է արևի տակ,
Էս աշխարհքում միատեսակ,
Մինը պակաս, մյուսը ավել,
Ողջ էլ գիտեն խընդալ, ցավել,
Չը՛ պարծենա երբեք ոչ ոք,

Թե ինքն անհաղթ մի բան է ջոկ.
Միշտ ուժեղից ուժեղը կա,
Իսկ ամենից ուժեղը՝ մա՛հ…

Թվում է՝ Թումանյանը նայում է հեռուն՝ իր հետ բերելով հայ ժողովրդի պատմական անցյալը։ Պատահական չէ, որ նրա ստեղծագործության բարձր պատմականությանն ուղիղ համեմատական է արդիականությունը։ Միշտ չէ, որ այս երկու գաղափարները համընկնում են։

Որպես ճշմարիտ պոետ, նա մատչելի է ու թանկ իր ժողովրդի համար, քանզի խոսում է իր ժողովրդի լեզվով, արտահայտում է այն, ինչ առհասարակ հատուկ է մարդկանց, մարդկային ողջ կյանքի բովանդակությանը՝ հրճվանքով ու տառապանքով, վշտերով ու տենչերով, հալածանքով ու մաքառումով։ Ահա թե ինչու Թումանյանը՝ ինչպես ամեն մի ազգային մեծ բանաստեղծ, գրավիչ է ուրիշ ժողովուրդների համար ևս։

Թումանյանը ծանոթ է աշխարհի շատ ժողովուրդներին։ Ոչ մի հայ գրող այնքան չի թարգմանվել նախկին Խորհրդային Միության ժողովուրդների և օտար լեզուներով, որքան Թումանյանը։

«Ամբողջ մարդկությունը մի ընտանիք է։ Ժողովուրդներն այդ ընտանիքի անդամներն են։ Գնում են մի նպատակի և ամեն մեկն ունի իր դերը՝ երջանիկ դարձնելու ամեն մեկի երջանկությունը»,- գրել է Թումանյանը։

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ամենայն հայոց մեծ բանաստեղծի ստեղծագործության ողջ բովանդակությունը ծառայել ու ծառայում է երջանկություն կերտելու նպատակին, որից ավելի ազնիվ ու վսեմը չի ճանաչում մարդկությունը։

Դրա ցայտուն օրինակներն են Թումանյանի հռչակավոր քառյակները։ Մարդկային փիլիսոփայության, տիեզերական մտածելակերպի արտահայտման վառ արտահայտություններ, որոնք արտացոլում են աշխարհի «դարդ ու ցավով, լավ ու վատով» ապրող բանաստեղծի խոհերն ու մտորումները։

Մարդը պիտի շնորհակալ լինի, ներող։ Այդ ժամանակ միայն ամուր է նրա կապը Բարձրյալի հետ.

Ամեն անգամ Քո տվածից երբ մի բան ես Դու տանում,
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ի՞նչքան է դեռ մընում,-
Զարմանում եմ, թե՝ ո՜վ Շռայլ, ի՜նչքան շատ ես տրվել ինձ,
Ի՜նչքան շատ եմ դեռ քեզ տալու, որ միանանք մենք նորից։

Թումանյանի ստեղծագործության հանճարը նրա պարզության մեջ է։ Նրա հերոսը ամենասովորական մարդն է, իսկ բնությունը խոսում է մարդկային լեզվով, ստիպում շնորհակալ լինել Նրան, որպեսզի դարձյալ ուժ ունենա հաղթահարելու իր անձնական տառապանքները և ապրելու ժողովրդի բարօրության հարցերով.

Քանի՜ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տրվել,
Լույս տալով եմ ըսպառվել։

Ինքնախոստովանության ինքնատիպ մի դրվագ է այս քառյակը, որ այսօր էլ բնորոշ է պարզ ու բոլորի համար ցավացող մարդուն։ Թումանյանն իր ամենամեծ վայելքը համարում է կարողանալ ինքն իրեն այլևս չզգալ ու հավելվել, ծավալվել և ամենքի հետ լինել։ «Ամենքի» համար լավ ապագայի իդեալը, նրա երջանկության

ակունքների երազանքը մարդու հոգևոր խաղաղությունն է, ներդաշնակությունը բնության հետ։

Հե՜յ ազահ մարդ, հե՜յ անգոհ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ կարճ,
Քանի՜ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քե առաջ։
Ի՜նչ են տարել նըրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ։

Մարդկային բարոյականությունն ու արժեքները ժամանակ ու տարածություն չեն ճանաչում։ Թումանյանը երազում է «հաշտ ու խաղաղ» մարդկություն, և այդ երազանքը կարող է դառնալ իրականություն, եթե մարդիկ մտածեն կյանքի անցողիկության մասին («Թմկաբերդի առումը»)։

Քանի որ ոչ ոք ոչինչ չի տանում իր հետ այս աշխարհից, ուրեմն ինչու՞ են մարդիկ իրար տանջում ու դժբախտացնում.

Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին,
Տանջում, տանջվում, որոնում է ու դժբախտ է նա կըրկին.
Է՜յ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սըրտալի,
Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի։

Բնության սերը, բնության պատկերները, որոնք Թումանյանի ստեղծագործության մեջ առհասարակ բազմաբովանդակ են ու բազմախորհուրդ, քառյակներում նաև հայրենասիրության արտահայտություններ են, ինչպես ժամանակի քաղքենի ու անարդար միջավայրի ապականություններին հակադրվելու միջոց։

Այսպիսով՝ տան գաղափարը, տան ճանապարհը, որը տենչում է նորից գտնել բանաստեղծը, այն ճանապարհն է, որը նրան տանում է Արևելքի եդեմները, հեքիաթային միջավայրը, դեպի այն ամենը, ինչը լավի ու դրականի պատկերացումների ու երազանքների մարմնացումներն են։ Իսկ բանաստեղծի ապրած ժամանակաշրջանի իրականությունը ձեռքերն ու բերանն արնոտ մարդակերներով էր

լեցուն, անբան մարդակերների, թուրք ցեղասպանների իրականությունն էր, որն էլ ստիպում էր գրողին ձգտել դեպի երազային ու հեքիաթային եդեմական պալատների։

Արևելքի եդեմներին իջավ պայծառ իրիկուն,
Հեքիաթական պալատներում ըսպասում են իմ հոգուն.
Ի՜նչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի…
Ա՜խ, թե նորից գըտնեմ ճամփան դեպի էնտե՜ղ, դեպի տո՜ւն…

Բանաստեղծի մեծ սիրտը բաց է աշխարհի հանդեպ, նա ապրում է բոլոր անմեղների վշտով ու տառապանքով։ Սա ոչ միայն քառյակների, այլ նրա ողջ ստեղծագործության առանցքն է։ Մարդը մեռնելով դառնում է «ոչինչ», մի շերտ հող և ուրիշ ոչինչ։ Սակայն այդ «ոչինչը» նրա ստեղծագործության մեջ գոյություն չունի։ Նա ամենուր զգում է Աստծու շունչը՝ կենդանի տիեզերքը, լսում տիեզերքի «խոր մեղեդին ու մրմունջը, որը վերացնում է ու վեհացնում է իր «ամենազոր հոգին»։ Հենց հոգին էլ ամենազոր է դառնում, երբ կարողանում է ընդգրկել ողջ տիեզերքը և զգում է իրեն ողջ տիեզերքի տերը։

Ամենապոետիկ քառյակներից մեկում նա իր և տիեզերքի կապը պատկերում է բանաստեղծի և ընթերցողի հարաբերությամբ, խոսում է տիեզերքի մասին այնպես, կարծես թե ուժգնորեն պաշտած սիրուհուն նվիրված հոգեվիճակից բխած խոսքեր լինեն դրանք.

Դու մի անհայտ Բանաստեղծ ես, չըտեսնըված մինչ էսօր.
Առանց խոսքի երգ ես թափում հայացքներով լուսավոր։
Ես էլ, ասենք, զարմանալի Ընթերցող եմ բախտավոր,
Որ կարդում եմ էդ երգերը էսքան հեշտ ու էսքան խոր։

Տիեզերական գաղտնիքներին հետամուտ, տիեզերքի՝ առանց խոսքի երգերն ընթերցող բանաստեղծին բնականաբար պետք է հուզեին կյանքի և մահվան հակասության առեղծվածները, որոնց մասին քառյակներից մեկում նա խոսք է բացում երկնադետ Մասիսի հետ.

Բարձր է հնոց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադետ.
Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել Նրա հետ-
Անհաս բանից, ըսկզբանից, երբ չրկան էլ դեռ չրկար,
Մինչև վախճանն անվախճանի քընընում է դարերդար։

«Մտքիս թևերը արագացնելով՝ իրերի, երևույթների էությանը չհասա»,- դարեր առաջ գրել է Նարեկացին։ Թումանյանի մտքերն էլ սլանում են անիմանալի հեռուները, բայց հուզող հարցերին որտեղի՞ց պատասխան գտնել, երբ հնարավոր էլ չի հասկանալ, թե ինչու՞ է տիեզերքի անվախճանության մեջ այդքան արագաթռիչ մարդկային կյանքը։

Այն կյանքը, որն անցկացրեց Թումանյանը, իր ժողովրդի պատմական կենսափորձը, որ նա խտացրեց իբրև գրող և հենց իր կենսափորձն ու հանճարը նրան հանգեցրին մեծ ու վսեմ գաղափարների, որոնք մարմնացում գտան իր բովանդակ ստեղծագործության մեջ. դրանք ժողովուրդների հավերժ բարեկամության, հալածվողի, տառապողի անվերապահ պաշտպանության, կյանքի ու աշխարհի ներդաշնակության գաղափարն են։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի ժողովրդի հոգևոր պատմության մեջ ասպարեզ է գալիս մի բախտավոր գրող, բախտավոր իր ստեղծագործության պատմական նշանակությամբ, որ բյուրեղացնում է իր ժողովրդի պատմական ու գեղարվեստական փորձը։

Թումանյանը դարձավ ազգի համար այն «Սիրիուսը», որը բոլորին էր հասանելի, սակայն նրան հասնելու համար մարդը պետք է «անհայտից կյանք առներ», թրծվեր ու բյուրեղանար, և դեռ քանի-քանի սերունդներ պիտի լսեն «էն մեծ խոսքը, որ տի ասվի աշխարհքին»։

Բարի ճամփա՛, հյո՛ւրըդ մեր հին.
Եվ թե տեսնես՝
Մեզնից էսպես
Մի հարցում տուր հըզոր մահին.
-Մարդու քանի՞
Սերունդ կանի
Մի հըրաժեշտն աստեղային։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լևոն Հախվերդյան, «Հայ դասականների գրադարան, Հովհ. Թումանյան», Երևան 1978թ.

2. Ստեփան Զորյան, «Իմ Թումանյանը», Երևան 1969թ.

3. Արամ Ինճիկյան, «Հովհաննես Թումանյան», Երևան, 1969թ.

4. Մկրտիչ Մկրյան, «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը», Երևան, 1981թ.